

## ԱՐՏԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ

Գավառի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի հայցորդ

### ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածում խոսվում է սոցիալական իրավական պետության էության առանձնահատկությունների և տվյալ հարցերին ժամանակակից մոտեցումների մասին:

Մասնավորապես հոդվածն անդրադառնում է փոփոխվող պատմական պայմաններում սոցիալական պետության ծագման իրավական պետության կարևոր սկզբունքների մերժմանը և սոցիալական գործառույթների ծագմանը, որոնք նոր փուլ են հանդիսանում իրավական պետության զարգացման գործընթացում:

Համապատասխանաբար անդրադարձ է կատարվում պետության և մարդու փոխհարաբերություններին, որտեղ կարևորագույն սկզբունքներ են հանդիսանում ազատությունը և հավասարությունը՝ ձևավորելով խնդրի երկու մոտեցումներ՝ հավասարության առաջնություն և ազատության առաջնություն:

*Հիմնարար բառեր-ազատություն, հավասարություն, անհատ, լիբերալիզմ, սոցիալական, անհատականություն:*

Սոցիալական պետականության հասկացությունը ծագել է XIX դարի վերջում, XX դարի սկզբում: Այն նշում է պետության մոտ նոր հատկությունների ծագումը, որոնք բացակայում էին ազատական իրավական պետության մոտ: Որումն են պետության հատկությունների նման հարստացման պատճառները: Նշանակում է արդյոք սոցիալական պետության ծագումը իրավական պետության կարևոր սկզբունքների մերժումը կամ սոցիալական գործառույթների ծագումը հանդիսանում է իրավական պետության զարգացման նոր փուլ փոփոխվող պատմական պայմաններում:

Իրավական պետության ձևավորումը մարդկային քաղաքակրթության մեծագույն ձեռքբերումներից մեկն է, որն անբաժանելի կապված է մարդու քաղաքական և քաղաքացիական իրավունքների «առաջին սերնդի» ծագման հետ<sup>1</sup>: Սակայն անհատների իրավահավասարությունը ընդունող զարգացած պետության կարևոր հատկություն հանդիսանում է դրա դինամիկությունը, հասարակությունում ծագող խնդիրներին ռեակցիա տալու ունակությունը: Տնտեսական, քաղաքական, իրավական հարաբերությունների ոլորտներում նոր գործընթացները պահանջում են պետության և անհատի փոխհարաբերությունների նոր պարամետրերի որոնում:

Ազատ շուկայական տնտեսության պայմաններում պետության և մարդու փոխհարաբերությունների վերաբերյալ հարցը ի սկզբանե հանդիսացել է բուրժուական հասարակության տնտեսական և քաղաքական-իրավական մտքի տարբեր հոսանքների ներկայացուցիչների հակադրման կենտրոն, քանի որ այն շոշափում էր բուրժուական հասարակության կարևորագույն սկզբունքները՝ ազատությունը և հավասարությունը: Ինչպես հայտնի է, ձևավորվեցին խնդրին երկու մոտեցումներ՝ հավասարության առաջնություն կամ ազատության առաջնություն: Մարդու անհատական ազատության տեսության կողմնակիցները այն տեղակայում էին հավասարությունից բարձր: Նրանք պետության հիմնական պարտականություն համարում էին այդ ազատությունը ինչ-որ բանից, այդ թվում նաև պետական միջամտությունից երաշխավորումը, ամենից բարձր գնահատվում էր տնտեսական ազատությունը, իսկ քաղաքական իրավունքը՝ դիտարկվում միայն որպես մարդու ազատության, անկախության և անհատականության պաշտպանության միջոց: Անհատական ազատության կողմնակիցները (Ա. Սմիթ, Ս. Միլլ, Բ. Կոնտան, Դ. Լոկ և ուրիշներ) հասկանում էին, որ նման ազատությունը վերջնական արդյունքում ծնում է անհավասարություն, որ ազատությունը և հավա-

սարությունը կարող են հակասել միմյանց, սակայն ազատությունը նրանք համարում էին բարձրագույն արժեք, որը ապահովում է անձի անհատականության և յուրօրինակության զարգացումը, չեզոքացնում մարդկանց միմյանց «նմանեցումը»: Նման «բացասական» ազատության ապահովման գլխավոր պայման՝ պետական չմիջամտությունը, տնտեսությունից պետության հեռացումն է:

Դրան զուգահեռ ծագեց տեսություն, որը չէր բացառում անհատական ազատության նշանակությունը, սակայն ձգտում էր այն համակցել հավասարության հետ անհատների հավասարության ապահովման մեջ պետության հաշվառմամբ: Նման հայեցակարգի հիմնադիր հանդիսացել է Ռուսոն, ով համարում էր, որ հավասարության սկզբունքին պետք է ենթակայի ամենը, այդ թվում նաև իշխանությունը, որի խնդիրը հավասարության ապահովումն է: Նման մոտեցման մեջ հստակ արտահայտվում է ոչ միայն բացասական ազատությունից (պետության միջամտությունից) երաշխավորման, այլ նաև որպես հավասարության ապահովման հետ կապված պետության որոշակի գործողություններին քաղաքացու հուսալի իրավունքի դրական ընկալումը:

Անհատների ազատումը պետության խիստ հոգածությունից զարգացնում է մարդկանց նախաձեռնողականությունը և ինքնագործունեությունը, նպաստում մասնավոր գործարարության և շուկայական տնտեսության զարգացմանը, ապահովում արտադրական ուժերի բուռն զարգացումը, նոր տեխնոլոգիաների ստեղծումը և վերջնական արդյունքում՝ ազգային հարստության աճը, բուրժուական պետության տնտեսական հզորության ամրացումը: Այս ամենը հաստատեց XVIII դ. դասական լիբերալիզմի, դրա ազատության գաղափարների և lausser-faire սկզբունքի բարձր արժեքավորությունը:

Սակայն արդեն XIX դ. վերջերում ակնհայտորեն բացահայտվեցին նաև բացասական հետևանքները, որոնք հանդիսանում էին լիբերալիզմի և անհատականության գաղափարների, բացասական ազատության (ցանկացած միջամտությունից, ազդեցությունից և այլն), «ազատության» սկզբունքների իրականացման արդյունք<sup>2</sup>:

Այս շրջանում առավել ցայտուն սկսեցին արտահայտվել հասարակությունում դասակարգային հակասությունները, հարստության և աղքատության միջև կտրուկ բևեռացումը, որոնք կարող էին

հանգեցնել սոցիալական ցնցումների: Անհատապաշտությունը, որը զբաղեցնում էր այդքան ակնառու տեղ դասական լիբերալիզմի ուսմունքներում, սկսեց բացահայտել «եսասիրություն և ինքնասիրություն» (Ֆ. Հայեկ): Դա էականորեն հակասում է այն նախնական իմաստին, որը հաղորդվում էր տվյալ հասկացությանը լիբերալ հայեցակարգերով: Լիբերալ հոսանքների պատկերացումների մեկնաբանությունում անհատապաշտությունը ասոցացվում էր անձի ինքաբավության բարձր գնահատականի հետ: «Անհատականության հիմնական գծեր... հանդիսանում է անձի նկատմամբ հարգանքը որպես այդպիսին, այսինքն՝ յուրաքանչյուր մարդու՝ իր գործունեության սեփական ոլորտում, որքան էլ այն նեղ չլինի, հակումների և հայացքների բացարձակ առաջնության, անհատական օժտվածությունների և հակումների զարգացման ցանկության համոզվածության ընդունումը»: Ըստ Հայեկի՝ լիբերալ շուկայական հայեցակարգի հետևողական կողմնակցի կարծիքի՝ հատկապես նման անհատապաշտությունը, որը ծագել է քրիստոնեության և անտիկ փիլիսոփայության տարրերից, առաջին անգամ ամբողջովին ձևավորվեց Վերածննդի շրջանում, վերածվեց արևմտաեվրոպական քաղաքակրթության:

Բուրժուական հասարակության զարգացմանը զուգահեռ անհատապաշտության հասկացությունը միավորվում և սկսում է ասոցացվել ինքնասիրության և կամայականության հետ: Անհատական պահանջների և հակումների հիպերբոլացումը անփոփոխ հանգեցնում է հասարակության բարոյական և սոցիալական դեֆորմացիաների, տարբեր շերտերի և դասակարգերի շահերի կտրուկ հակադրության և հակամարտության: Անհայտանում են դրանց փոխկապվածության, պատասխանատվության և համերաշխության զգացողությունները:

Լիբերալ ուղղությունների ներկայացուցիչները ծայրահեղ անհատապաշտության և դասական լիբերալիզմի գաղափարների ճգնաժամը սկսեցին զգալ արդեն XIX դ. վերջում և հատկապես XX դ. սկզբներում: Հասարակությունում աճած հակասությունները և լարումները սահմանեցին ծագած իրավիճակներին պետության ռեակցիաների նոր եղանակները, որոնց նպատակ հանդիսանում էր սոցիալական պայթյունների և կատակլիզմների կանխարգելումը: Սոցիալական լարվածության նախադրյալները ձևավորվում էին ոչ միայն հասարա-

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

կուրսան կտրուկ բևեռացման և մարդկանց փաստացի անհավասարության աստիճանի ավելացման ազդեցությամբ, այլ նաև մարքսիստական հայեցակարգի լայն տարածմամբ և ընդունմամբ, որը կողմնորոշված էր սոցիալիստական հեղափոխությանը, բուրժուական կառույցի տապալմանը և պրոլետարիատի իշխանության հաստատմանը:

Նրբորեն զգալով այդ գործընթացները՝ նեոլիբերալ տեսաբանները առաջադրեցին ազատության նոր «դրական» ընկալում, որը նշանակում էր պետության սոցիալական կողմնորոշված քաղաքականության ասպահովման պարտավորությունը: Ազատության նոր «դրական» հասկացությունը, ըստ Պ. Նորգոլորողցի խոսքերի, «հասկացությունների ամբողջ շրջապատույտ է, որը նշանավորում է իրավական պետության զարգացման մեջ նոր փուլ»<sup>3</sup>: Սոցիալապես կողմնորոշված քաղաքականության հաստատումը նշանակում է.

- պետության դերի աճ տնտեսական գործընթացների ազդեցությունում, «անհատապաշտական հայեցակարգի նվազեցում» և հասարակական փոխօգնության գործի համար կառավարիչների տնօրինության տակ առավելագույն ուժի կիրառության պարտավորություն: Նրանք պետք է ոչ միայն ձեռնպահ մնան, այլև պետք է գործեն, և այդ պարտավորությունը վերածվում է կրթության ասպահովման և աշխատանքի երաշխավորման իրավաբանական պարտավորության,

- տնտեսական գործընթացների «բարոյական փոփոխության» փորձերը, որ հենված են աղքատության և անհավասարության չեզոքացման, սոցիալական արդարության հաստատման ձգտմանը,

- հասարակության սոցիալական բարեփոխության հիմնական ուղղությունների սահմանումը. վերջիններս ստեղծել են մարդու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների «երկրորդ սերունդը»:

Այսպիսով, հաստատվեցին պետության և մարդու միջև փոխհարաբերությունների նոր պարամետրեր՝ կապված պետության կողմից մարդու իրավունքների «երկրորդ սերունդների» ասպահովմանը աջակցող միջոցներ ձեռք առնելու հետ: Այսպես ծագում է սոցիալական պետության գաղափարը, որը ստացավ լայն զարգացում և տարածում XX դ. երկրորդ կեսերին<sup>4</sup>:

Սակայն հասարակության սոցիալական փո-

փոխման գաղափարը հանդիպում և շարունակում է հանդիպել կտրուկ հակադրության ոչ միայն պահպանողականների, այլ նաև հին լիբերալիզմի գիտնականների և քաղաքագետների շարքերում: Պետության սոցիալական գործառույթները, անսահմանափակ տնտեսական ազատության կողմնակիցների կարծիքով, հանգեցնում են ազատ շուկայի «արդարության» խախտման, սահմանափակում անհատի իրավունքները, ծնում պասսիվ անձանց շերտ, որոնք հենվում են պետության օգնությանը և չեն ցանկանում ակտիվորեն ներառվել ազատ շուկայի մրցակցությունում: Ինքը՝ շուկան, հանդիսանում է հասարակության հարաբերություններում իրական արդարության հաստատման եղանակ, որը ասպահովում է անձի ազատությունը և ինքնավարությունը: Պետության սոցիալական կողմնորոշումը ազատության նկատմամբ ոտնձգություն է, քանի որ այն անխուսափելիորեն հանգեցնում է վերջինիս միջամտությանը տնտեսական ոլորտում, բուրժուական հեղափոխության հիմքերից հեռացմանը:

«Սոցիալական անհավասարության հարթեցման» անհրաժեշտությանը պնդող ուղղությունը հանդիսանում է, ըստ Պ. Նովգոլորողցի կարծիքի, բացի պաշտոնական-իրավաբանականից այլ հավասարություն չընդունող և հավասարության գաղափարի ազդեցությամբ ազատության գաղափարը ձևափոխել առաջարկող հին լիբերալիզմի փլուզման արդունք:

Առաջին անգամ ռուս լիբերալ մտածողներ Վ. Ս. Սոլովևի և Պ. Ի. Նովգոլորողցի կողմից առաջադրվել է մարդու արժանապատիվ գոյության իրավունքի գաղափարը, որի իրականացումը կապվում էր սոցիալական բարեփոխությունների իրականացման հետ:

Բուրժուական լիբերալների (դասականների և նորերի) և պահպանողականների բանավեճին ակտիվորեն միանում էր մարքսիզմը, որը հանդես եկավ սոցիալական բարեփոխությունների եռանդուն հակառակորդ, սակայն այդ նպատակներով կիրառում էր սեփական փաստարկները, որոնք սկզբունքորեն տարբերվում էին սոցիալական ձևափոխությունների ինչպես կողմնակիցների, այնպես էլ հակառակորդների փաստարկներից: Բարեփոխությունների հետ մարքսիզմի պայքարի հիմքում ընկած է բուրժուական կարգի պահպանության դեպքում բարեփոխությունների միջոցով աշ-

խատավորների իրավիճակի բարելավման անհնարինության վերաբերյալ գաղափարը: Մարքսիզմը ընդունել է կապիտալիստական հասարակությունում աշխատավոր դասակարգի դեմոկրատական ձևափոխությունների, աշխատավորության տնտեսական վիճակի բարելավման համար պայքարի նշանակությունը, սակայն համարում էր, որ նման պայքարը պետք է նախապատրաստի հող պրոլետարական հեղափոխության և պրոլետարի իշխանության հաստատման համար, քանի որ բուրժուական կառուցվածքի շրջանակներում բարեփոխումների իրականացումը աշխատավորության դրությունում էական փոփոխություններ չի ունենա:

Պատմությունը մերժեց համատարած հավասարության և արդարության հեղափոխական հաստատման ուղիով մարքսիստական գաղափարները: Սակայն նաև ժամանակակից աշխարհում գոյություն ունի կարծիքների բևեռացում նրա վերաբերյալ, թե արդյոք պետությունը պետք է չեզոքացնի շուկայական հարաբերություններով ծնվող անարդարությունը, հավասարեցնի շուկայի հետևանքով անխուսափելիորեն ծագող սոցիալական անհավասարությունները, ձգտի արդարության հաստատմանը սոցիալական ծրագրերի, ռացիոնալ հարկման, վերաբաշխման մեխանիզմների կազմակերպման ուղիով<sup>5</sup>:

Բազմաթիվ բուրժուական գիտնականներ, օրինակ՝ Ֆ. Հայեկը, Մ. Ֆրիդմենը, համարում են անթույլատրելի շուկայական հարաբերություններում պետության ցանկացած միջամտություն արդարության և հավասարության համար, քանի որ դա հակասում է ազատ շուկայի սկզբունքներին և կառուցվածքներին: Այլ ժամանակակից մի ուղղություն՝ նոր էգալիտարիզմը, հստակորեն նշել է մարդկանց սոցիալական դրության հավասարեցման (Ջ. Ռոուլս, Կ. Ջենկենս), սոցիալական անհավասարությունների նրբացման տենդենցները:

«Նոր էգալիտարիզմը» հանդես է գալիս կապիտալիստական զարգացումների պահպանողական մոդելների յուրօրինակ հակապատկեր, այդ իսկ պաճառով պատահական չէ, որ առաջատար ամերիկյան նեոկոնսերվատորները ակտիվորեն ներառվել են վերջիններիս հետ բանավեճում»:

Բուրժուական գիտնականների այդ դիրքորոշումները դուրս են եկել բարցարձակ գիտական բանավեճերի սահմաններից. դրանք ունեցել են անմիջական ազդեցություն պետության քաղաքականության վրա, դրանց սոցիալական կողմնորոշման առավել կամ պակաս աստիճանների վրա: Չնայած սոցիալական պետության գաղափարներին պահպանողական հայեցակարգերի ներկայացուցիչների ակտիվ հակադրության՝ այս գաղափարը ստացել է լայն ընդունվածություն, մարմնավորվում է գործնականում և ամրագրվում ժամանակակից պետությունների սահմանադրություններում:

Այս հարաբերությունում հետաքրքրական է Գ-Դ-Հ փորձը, որը սահմանադրորեն հռչակեց իրեն սոցիալական իրավական պետություն<sup>6</sup>: Պետության սոցիալական գործառույթները սկսեցին ձևավորվել արդեն առաջին հետպատերազմական տարիներին, երբ փոխառնվեցին ինստիտուցիոնալ կառուցվածքները, որոնք իրենց արմատներով հեռանում էին անցյալի ավանդույթներից և կողմնորոշված էին բիսմարկյան կայսրության շրջանի սոցիալական քաղաքականության ինստիտուցիոնալ վերականգնմանը: Դա վերաբերում էր առողջապահության և բնակարանային ոլորտներին: Առանձնահատուկ անհրաժեշտ է առանձնացնել 1957թ. կենսաթոշակային բարեփոխությունը, որը, «ըստ արդարության, համարվում է մեծագույն սոցիալ-քաղաքական գործունեություն»:

www.journal.lawinstitute.am

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս Ենգիբարյան Վահե. Սոցիալական իրավունքներ: Երևան, 2010, Սոցիալական իրավունքների շտեմարան: Երևան, 2014:  
<sup>2</sup> Տե՛ս Гурлев В.В. Социальное государство общество. –М., 2002, с. 53-54.  
<sup>3</sup> Տե՛ս Анджей Великий. Философия права русского либерализма. –М., 2012, с. 380-381.  
<sup>4</sup> Տե՛ս Баглай М.В. Социальное государство: понятие функции // Материалы конгресса «человек: социальная политика в

период осуществления экономических реформ» 26-27 апреля, -М., 1994, с. 12-14.

<sup>5</sup> Մանրամասն տե՛ս Սուվարյան Յուրի. Տնտեսության գիտություն: Երևան, 2014, էջ 33-45:

<sup>6</sup> Մանրամասն տե՛ս Чилькина К.В. Правовая идея социального государства в Германии в XIX в. –М., 2014, с. 56-57.

**Արտակ Մանուկյան**

Главный специалист отдела юридической консультации  
юридического департамента администрации  
Национального Собрания Республики Армения,  
соискатель юридического факультета  
Гаварского государственного университета.

#### РЕЗЮМЕ

##### *Понятие и сущность социального правового государства*

В статье рассматриваются особенности сущности социального правового государства и современный подход к этим вопросам.

В частности, статья фокусируется на меняющихся исторических условиях, показываются возникновения важных принципов социального государства и социальных функций, которые представляют из себя новый этап в процессе развития правового государства.

Соответственно, статья ссылается на отношение государства и человека, где наиболее важными принципами являются свобода и равенство, образуя два подхода: приоритет равенства и приоритет свободы.

**Ключевые слова:** *свобода, равенство, индивидум, либерализм, социальная, личность.*

**Artak Manukyan**

Chief specialist of the Division of Legal advises of the Juridical  
department of the National Assembly of the Republic of Armenia,  
Master's degree of the Faculty of Law of Gavar State University

#### SUMMARY

##### *The concept and essence of the social, legal state*

The article describes the features of the essence of the social legal states and the contemporary approaches of the main issues.

In particular, the article focuses on the changing historical conditions of the origin of the important principles of social states exclusion and social functions of the origin of a new stage in the development process of legal state.

Accordingly, the article is referred to the state and human relations, where the most important principles are freedom and equality are forming the two approaches, which are the equality priority and freedom priority.

**Keywords:** *liberty, equality, individual, liberalism, social, personality.*